

## ՍՊԱՍՈՒԱԾ ԱՅՑ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Վաղուց, շատ վաղուց սպասուած երազանք էր, որ իրականանում էր: Բոլորս, ովքեր հաւաքուել էինք «Զուարթնոց» օդակայանում, ունէինք երազանքի եւ իրականութեան սահմանը խախտողներին հոգու խոռովք: Ուխտաւորների մեր խումբը առաջնորդում էր Սուրբ Յովհաննէս եկեղեցու հոգեւոր հովիւ Տէր Տիրայր Սահրադեանը:

Գիշեր էր: Մեր ինքնաթիռը վայրէջք կատարեց լոյսերով ողողուած Թել Ավիվում: Հրեաների հետ ծանօթանում էինք օդակայանում: Գիտէի նրանց պատմութիւնը եւ փորձում էի այդ անդրադարձը գտնել եւ նրանց աչքերում: Այստեղ սպասում էին հայ հոգեւորականներ, ովքեր պիտի ուղեկցէին մեզ Երուսաղէմ:

Հին, շատ հին պատմական վերուվարումներով քաղաք այս քաղաքը մեզ դիմաւորում է գեղեցիկ արմաւենիներով: Այստեղ դարերը կարծես ապրում են կողք կողքի: Զարմանքով նկատում եմ, որ փողոցները խնդրում են պարիսպների լաբիրինթոսում, որոնք գնալով նեղ էին դառնում:

Առաւօտեան մեզ ընդունեց Երուսաղէմի հայոց Պատրիարք Տէր Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանը: Սրբազանը նստած էր իր գահին՝ զարմանալի անխոռով ու գեղեցիկ ժպիտով: Ինձ թուաց, որ հենց սկզբից՝ աջահամբոյրի ընթացքում, նա շոյալօրէն մեզ սէր բաշխեց: Սէր, որ ուղեկցեց մեզ բոլոր եօթ օրերի ընթացքում եւ երբեւէ չէ մոռացուելու:

Պատրիարքարանում հիացմունք են յարուցում արուեստի եւ մշակոյթի այն գեղեցիկ պոռթկումները, որոնք

դարձել են շոյալ գոյներով կտաւներ՝ աստուածաշնչեան պատումներով: Այստեղ ներկայացուող իւրաքանչիւր կտաւ արուեստի անգնահատելի արժէք է:

Մեզ ուղեկցող Հայր Թէոդորոսը միանգամից սիրելի դարձաւ բոլորիս: Նա շատ գեղեցիկ ներկայացնում էր Սր. Յակոբեանց մայր տաճարի ողջ պատմութիւնը: Լսում էինք հիացած, հասկանում, որ այստեղ Երուսաղէմը հայկական է: Հայի արարող մատներն են նաեւ իմաստաւորել եւ գեղեցկացրել Երուսաղէմը: Ներս ենք մտնում, եւ մոռանում, որ հայրենիքից այնքան հեռու ենք: Եւ վերստին ապրում ենք ազգային հպարտութեան այն զգացումը, որ մեր հաւատացեալ նախնիները եկեղեցիները կառուցել են լոյսի խորհրդին արժանի տաղանդով: Տաղանդ, որ իր հիմքում մաթեմատիկական ճշգրտութիւն ունի, բայց այն խախտելուց է սկսում հայի հանճարը, որը արարել է այս տաճարը: Զգում ենք նաեւ, որ այստեղ հայ խորանները կարօտ են հայի տաճ աչքերին, իսկ տաճարի դռները՝ հայի տաճ մատներին:

Բայց սա դեռ սկիզբն էր:

Մեր սիրելի վարդապետը մեզ ուղեկցեց Սուրբ Յարութեան տաճար: Շատ էի կարդացել եւ այս տաճարի մասին: Բարձր, շատ բարձր են տաճարի դռները. կառուցուած խաչակրաց շրջանին: Մտնելիս այստեղի խորհուրդը չես կարող անմիջապէս ընկալել: Փորձում ես հասկանալ յետոյ, երբ ներսում ես: Որ այստեղ պիտի կառուցուէր աշխարհի ամենաբացառիկ ճարտարա-

պետական լուծումներն ունեցող տանարը, դա հասկացել էին դեռ առաջին ֆրիստոնեաները: Հասկացել էին ու կեանքի կոչել 4րդ դարում: Երբ մտնում ես այս տանարը, հասկանում ես, որ այն ի սկզբանե եղել է երկնում՝ մինչև երկիր մոլորակի արարումը: Եղել է այսպես գեղեցիկ, կատարեալ, բարձր: Նայում ես ու հասկանում, որ մարդ արարածը, որ կարող է Աստուած խաչել, նա չէր կարող յարութեան հրաշափառ տանար կերտել: Կառուցողի անաղարտ ուղեղում այն եղել է ի վերուստ: Նա ընդամենը զգուշօրէն ֆարագանգուածից պոկել հանել է աւելորդը, յետոյ յղկել ու դարձրել բազում լուսոյ խորաններ:

Տանարի կենտրոնում Տիրոջ գերեզմանն է: Նայում եմ ռոտունդային ու նորից ապրում ազգային հպարտութեան անբացատրելի զգացումը: Գերեզմանն ամփոփող ռոտունդան ունի զուարթնոցեան ֆարեղէն լուծումը: Փոփրիկ «Ջուարթնոց»: Նա այստեղ էլ կայ, ամենավերելում երկնում սահող ամպերի մէջ: Այնքան մեծ է տանարի խորհուրդը, որ նրան աւել պահուստներ պէտք չեն: Այստեղ ամէն գիշեր հսկում կայ, ամէն գիշեր հնչում է հայ պատարագը, հնչում է հայերէն: Այդ պահին երկիրը երկինք է դառնում: Աչք ու միտք շոյում են ծաղկազարդ խաչքարերը: Երկար նայում ես նրանց: Յետոյ խաչքարը դադարում է խաչքար լինելուց: Մտապատկերիդ մէջ այն կամաց դառնում է մարդկային դէմք: Փորձում ես մտովի վերականգնել այն աչքերն ու մատները, որ արարել են ծաղկած խաչքարը: Այս տանարում նորից արժեւորում ես համաշխարհային մշակոյթի ընտանիքում հայոց տեղը:

Քայլում եմ խաչի ճանապարհով, անցնում նեղ փողոցներով: Փորձում

եմ մտովի պատկերացնել խաչալին ուղեկցողների աղմուկ-աղաղակը: Նորից նայում եմ երկնքին: Այստեղ երուսաղէմում, ամպերը շատ մօտ են սահում մարդկանց: Այսինքն, երկինքը այնքան մօտ է նրանց, բայց, թոււմ է հեռու է նրանցից ահաւոր ու մեծ խորհուրդը: Այդքան մօտ հոգեւոր երկնքին ու այդքան հեռու... Իմ լեռնաշխարհում բարձր, շատ բարձր են ե՛լ երկինքը, ե՛լ լեռները: Ահա թէ ինչու իմ լեռնաշխարհում առաջինը փարուեցին Քրիստոսին: Ուստի եւ իմ լեռնաշխարհի մարդիկ պիտի գային երուսաղէմ, կառուցէին, կեանքի կոչէին Տիրոջ կամքը: Բեթղեհէմ...

Եկաւ եւ պիտի գար մեզ համար երկար սպասուած Բեթղեհէմի գիշերը՝ իր երկնային խորհրդով: Անցնում եմ երկու երկրները բաժանող բետոնէպատը: Զարմանալի բան. չնայած ռազմական դրութեանը Պաղեստինի սահմանապահները լայնօրէն բացում են իրենց երկրի դարպասները: Անցնում եմ սահմանային կէտը՝ առանց անձնագրերի ստուգման: Որքա՞ն մեծ է հայ եկեղեցու սպասաւորի հանդէպ տածած յարգանքը... Մտնում եմ բիրլիական Բեթղեհէմը: Այստեղ է ծնուել Տէրը, այս երկնակամարում է վառուել աստղը: Հայ սկաւտների թմբուկների համաչափ զարկերն են հնչում, ծածանում են հայոց դրոշմները: Շուրջը խմբուած են նաեւ արաբախօս մարդիկ, որոնք գիտեն, որ հայերը տօնում են ամենամեծ տօնը՝ Սուրբ Ծնունդը: Հնչում է անմահ ու Սուրբ Պատարագը, հնչու է ամբողջ ֆաղափում, օդը լցնելով մայրենի բարբառով ու մեղեդիներով: Եւ դրանից է, որ նորից շատ բան մի ակնբարթում հայերէն է դառնում: Ցածր դռնով մտնում եմ տանար: Նորից խորհուրդ՝ խոնարհութեան խուհուրդը: Քայլում

ենք սիւնաշարով, յայտնուում Հայկական խորանի առջեւ: Քիչ անց սկսւում է Պատարագը: Չկան երգեհոններ, չկան երաժիշտներ: Կան միայն հոգեւորականներ, որոնց ձայների ելեւէջումները հոգու աղերսներ են երկինք բարձրացնում: Թուաց խոր միջնադարում եմ. նրանք, ծնկների վրայ մի շրջան բոլորած, ինքնամոռաց Կոմիտաս են երգում: Երեւի ամենայն հայոց երգի վեհափառը՝ Կոմիտասը, փառաւորուեց երկնում: Նա նորից ու նորից, ինչպէս իր ժամանակին Բեռլինում, յաղթութեան ձեռնոց նետեց Բեթհովենին ու Մոցարտին: Չեռնոց նետեց՝ առանց երգեհոնի, տաւիղների, ծնծղանների: Երգեհոն էին դարձել նրանք՝ սուրբ հայրերը, երկնային տաւիղ էր դարձել նրանցից իւրաքանչիւրը: Էլ ի՞նչ երկինք պիտի լինէր, որ փակուէր նրանց առաջ: Ինձ թւում էր, որ այդ պահին մեղեդին յաղթում էր խօսքին:

Վերադառնում ենք Երուսաղէմ: Իսկ հիմա ծրագրւում է յաջորդ անակնկալը՝ Գալիլիա, Յորդանան գետ՝ ծիծաղկոտ կանաչ-կանաչ ալիքներով: Ջարմանալի խաղաղութիւն է: Այստեղ Աստուած մի ափի մէջ է ամփոփել բնութեան սիրտը՝ Գալիլիայի ծովը, բնութեան միտքը՝ ծիածանակապ

երկինքը, նրանցով հիացող կիպարիսներն ու արմաւենիները:

Նորից Երուսաղէմ: Գիշեր է: Վերադառնում ենք Երեւան: Մենք այդպէս էլ չտեսանք Թել Ավիվը: Հայրենիքում ենք, ուրեմն՝ երանի մեր աչքերին: Ու այն հարցին, թէ ինչպէս տեսար Երուսաղէմը, մնում է միայն խորին համոզումով պատասխանել. «Եթէ հաւատում ես Փրկչի խաչելութեանն ու յարութեանը, ապա դու արդէն տեսել ես Երուսաղէմը: Երուսաղէմը կարելի է տեսնել եւ այստեղ՝ հոգու աչքերով, եւ դա ամենամեծ յայտնութիւնն է»:

Երանի նրան, ով չի տեսնի բայց կը հաւատայ: Եկանք այս հինաւուրց քաղաքից, բերեցինք հոգեշնորհի սուրբ հայրերի՝ Հայր Թէոդորոսի եւ Հայր Ղեւոնդի ջերմ ու շոայլ սէրը: Հայր Ղեւոնդը իր մեծ լուսութեան մէջ էր պատմում ամէն ինչ: Իսկ Տէր Տիրայրը մեզ առաջնորդեց դէպի խաչի նանապարհ, ներշնչեց մեզ գիտակցել ամենամեծ ու սրբազան Խորհուրդը...

Խորհուրդ խորին, անհաս, անսկիզբն...

Բաժանուեցինք այս քաղաքից, ինչպէս լուսաղէմին տեսած լաւ երագից են բաժանուում...

ՅՈՂԻԿ ԹԱՄՐԱԶԵԱՆ